

Վեգետացիայի ընթացքում լոլիկի ցեցի հայտնաբերման համար դիտարկման ենթակա են մորմագգիների ընտանիքին պատկանող մշակաբույսերն ու մոլախոտային բույսերը:

Ցեցի թռիչքի մոնիթորինգի և ցեցի տարածման օջախների ժամանակին հայտնաբերման և պայքարի ժամկետների ճշգրտման համար անհրաժեշտ է օգտագործել ֆերոմոնային թակարդներ:

Վեգետացիայի ընթացքում ֆերոմոնային թակարդների միջոցով մոնիթորինգի իրականացման համար թակարդները պետք է տեղադրել դաշտերի եզրերին, ցանկալի է ճանապարհի երկայնքով (1 թակարդ 3 հա-ի հաշվով)՝ կապելով փայտյա ցցերին, 40-50սմ բարձրության վրա:

Թակարդների տոնձապատ կաշուն տակդիրներն անհրաժեշտ է հաճախակի փոխել: Լոլիկի ցեցի կողմից բույսերին հասցվող վնասի ռիսկը կարելի է գնահատել որոշակի ժամանակահատվածում թակարդներում որսված արուների քանակով:



ՎՆԱՍԱՏՈՒԻ ԴԵՄ ՊԱՋՔԱՌԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԴԱՇՏՈՒՄ Ագրոտեխնիկական և մեխանիկական միջոցառումներ

- Աշնանը կատարել դաշտի ցրտահերկ 25սմ և ավելի խորությամբ:
- Կիրառել ցանքաշրջանառություն և բացառել մորմագգիների ընտանիքին պատկանող բույսերով հերթափոխումը:
- Ոչնչացնել ինչպես սածիլների ստացման համար օգտագործվող ջերմոցում ու ջերմատներում, հարակից տարածքներում, այնպես էլ դաշտաեզրերում աճող մորմագգի մոլախոտային բուսականությունը:
- Սածիլումից առաջ դաշտը նախապատրաստել ըստ ագրոտեխնիկական պահանջների:
- Դաշտերը ենթարկել տարածական մեկուսացման՝ հացազգի մշակաբույսերի բուֆերային շերտ ստեղծելով, որը կաահմանափակի այլ տարածքներից վնասատուի ներթափանցմանը մաքուր դաշտ /որպես սահմանագատող մշակաբույսեր կարելի է կիրառել ցորենի և եգիպտացորենի տարբեր տրոսեր/:

➤ Վեգետացիայի ընթացքում դաշտերը ենթարկել մշտադիտարկման, ինչպես ակնադիտական, այնպես էլ ֆերոմոնային թակարդների կիրառմամբ:

➤ Բերքահավաքից հետո հավաքել և ոչնչացնել բուսական բոլոր մնացորդները:

ԱՅԴՈՂ ՆՅՈՒԹԸ	ՎՆԱՍԱՏՈՒԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԺՈՒԸ
քլորանտրանիլիպոլ + լյամբդացիհալոտրին	ձու, թրթուր
սպիրոմեզիֆեն	ձու, թրթուր, հասուն էգեր
ֆլուբենդիամիդ	թրթուր
սպիրոդիկլոֆեն	ձու, թրթուր, հասուն էգեր
աբամեկտին + քլորանտրանիլիպոլ	ձու, թրթուր
քլորֆենապիր	ձու, թրթուր
աբամեկտին + ցիրոմագին	ձու, թրթուր, հասուն էգեր
գերանիոլ ցիրոնեզոլ ներոլիդոլ ֆարնեզոլ	ձու, թրթուր
քլորանտրանիլիպոլ	ձու, թրթուր, հասուն էգեր
սպինոսադ	թրթուր, հասուն էգեր
լյուֆենտուրոն	թրթուր

Լոլիկի ցեցի դեմ շուկայում առկա միջատասպանները բազմաթիվ են, առկա է արդյունավետ պատրաստուկների լայն ընտրանի:

Անհրաժեշտ է մշտապես հետևել պատրաստուկների տարափաթեթավորումների վրա զետեղված հրահանգներին՝ օգտագործման չափաքանակի, կիրառման եղանակի, կրկնողությունների առավելագույն թվի, սպասման ժամկետների, ինչպես նաև անվտանգության կանոնների վերաբերյալ:

Տվյալ վնասատուի դեմ պետք է իրականացվի համակարգված, ինտեգրված պայքարի միջոցառումներ՝ համատեղելով հնարավոր բոլոր եղանակները, որոնք կունենան դրական ազդեցություն վնասատուի տարածման սահմանափակման և ամբողջական ոչնչացման գործում:

Սույն ուսումնական ձեռնարկը տրամադրվել է «Բուլղոլ գյուղատնտեսության զարգացումը Արարատի և Արմավիր մարզերում» (IADAM) ծրագրի շրջանակում Corner Business Platform (ԼՊԸ-ի) կողմից:

«Հայաստան և Բուլղոլ գյուղատնտեսության զարգացումը Արարատի և Արմավիր մարզերում» (IADAM) ծրագիրը, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից (ԵՄ) և իրականացվում Ջաղացման ֆրանսիական գործակալության (C2A) անցկացրած, նպատակ ունի փոփոխել Բուլղոլ գյուղատնտեսությունը Հայաստանում:

<< Լեռնոլիսյան նախապատրաստված կողմից իրականացվող Թաղի տեխնիկական անցակցության բաղադրիչ իրականացվում է «Արդյունաբերական Եվրոպա»-ի, «Ալմիրա ջեմադինգ գրուպ»-ի, «Դաշնակալական զարգացման գործակալություն» ՀԿ-ի և «3 ԱՊ» ՍՊԸ-ի կողմից: ԼՊԸ նախագրությանը կրճատվում կողմից գյուղատնտեսական ցարքաքանության ամրագրման և որոշումների ընդունման մեջ արդյունաբերական նպատակով:

Այս «Խոսքերստեղծ» ֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից: Բովանդակության համար ամբողջությամբ պատասխանատու է «Corner Business Platform» ԼՊԸ-ն և պատասխի է, որ այն արտացոլի Եվրոպական միության տեսլականները:

ԼՈԼԻԿԻ ՀԱՐԱՎԱՄԵՐԻԿՅԱՆ ԳԵՑ (TUTA ABSOLUTA MEYRICK)

Հայաստանի Հանրապետության տարածքում լոլիկի հարավամերիկյան ցեցն առաջին անգամ հայտնաբերվել է 2012 թվականին:

Վնասատուն ունի մի քանի անվանում՝ լոլիկի հարավամերիկյան սղոցող, լոլիկի հարավամերիկյան ցեց, լոլիկի տերևային ականող, լոլիկի հարավամերիկյան ներթափանցող որդ, իսկ առավել տարածվածը՝ լոլիկի ցեց: Բնորոշվում է որպես մորմագգի մշակաբույսերով (Solanaceae) և մորմագգի մոլախոտային բուսականությամբ սնվող, մեծ վնասաբերությամբ, արագ տարածման և հարմարվողականության ձեռք բերման առանձնահատկություններով:

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Հասուն ցեցի մարմնի երկարությունը մոտ 7 մմ է, թևերի բացվածքը՝ 8-12 մմ: Ունի թվաքանակ բեղիկներ: Հասունը շագանակագույն կամ արծաթափայլ մոխրագույն է՝ առջևի թևի վրա սև բծերով:



ԼՈԼԻԿԻ ԳԵՑԻ ԹԻԹԵՐ

Ձվերը օվալաձև-տակառաձև են, ունեն 0.35-0.5 մմ երկարություն, 0.2-0.25 մմ լայնություն և սերուցքասպիտակավունից մինչև դեղին գույն: Ձվադրում են տերևների վրա՝ հիմնականում ստորին կողմում, ծաղկակոկոնների, կանաչ պտուղների բաժակի, բույսի վերերկրյա այլ օրգանների վրա:

ԼՈԼԻԿԻ ԳԵՑԻ ՁՈՒ



Ձվից նոր դուրս եկած թրթուրը 1 մմ երկարության է, իսկ հասուն թրթուրը՝ 8-9 մմ: Մարմինը սերուցքազույն է, ունի մուգ գլուխ, որը երկրորդից չորրորդ մաշկափոխության ընթացքում դառնում է կանաչադեղնավուն, հետագայում այն ձեռք է բերում կարմիր երանգ: Գտնվում են տերևների վրա առկա ականներում, ցողունի, ծաղիկների և պտուղների մեջ:

ԼՈԼԻԿԻ ԳԵՑԻ ՏԱՐՔԵՐ ՀԱՍՏԱԿԻ ԹՐԹՈՒՄՆԵՐ

Հարսնյակներն ունեն 4-6 մմ երկարություն, նախ կանաչավուն են, հասունանալիս դառնում են բաց շագանակագույն:



ԼՈԼԻԿԻ ԳԵՑԻ ՀԱՐՄՆՅԱԿ

Լոլիկի ցեցի ամբողջական զարգացման տևողությունը կախված է կլիմայական պայմաններից: Ջարգացման տևողության վրա էականորեն ազդում են ջերմաստիճանային պայմանները. 14°C-ում զարգացումը տևում է 75 օր, իսկ 25-27°C-ում՝ 23: Ձվի զարգացման տևողությունը 5-7 օր է, թրթուրային փուլինը՝ 13-15, հարսնյակայինը՝ 8-11: Արուների կյանքի տևողությունը 6-7 օր է, էգերինը՝ 10-15:

Էգերը սովորաբար ձվադրում են բույսերի վերերկրյա օրգանների վրա, հիմնականում մեկական (լոլիկը հիմնական տեր բույսն է) և յուրաքանչյուր էգ իր կյանքի ընթացքում դնում է մոտ 250-300 ձու: Ձվից դուրս գալուց հետո թրթուրները ներթափանցում են բույսի հյուսվածքների մեջ ու սկսում սնվել՝ առաջացնելով ականներ, որոնցում էլ անց են կացնում իրենց կյանքը մինչև հարսնյակավորվելը: Թրթուրները մինչև հարսնյակավորվելն անցնում են զարգացման 4 հասակ: Հասուն թրթուրը հարսնյակավորվում է հողում՝ մի քանի սանիմետր խորությամբ, տերևների մակերեսին կամ էլ ականների մեջ (որոշ դեպքերում բոժոժների մեջ), որը կախված է միջավայրի կլիմայական պայմաններից:

ԼՈԼԻԿԻ ԳԵՑԻ ՊԱՏՃԱՌԱԾ ՎՆԱՄՆ ՈՒ ԱՆՏԱՆԻՇՆԵՐԸ


Լոլիկի բույսերը և պտուղները կարող են վնասվել բոլոր փուլերում՝ սածիլից մինչև հասուն բույսերը, նաև բերքահավաքի և փաթեթավորման ընթացքում: Բույսերի տարբեր օրգանների վրա առկա սև արտաթորանքը նույնպես կարող է վկայել ցեցի առկայության մասին:

Ձվերից դուրս եկած երիտասարդ թրթուրները ներթափանցում են լոլիկի բողբոջների, ծաղիկների, չհատնացած, հետագայում նաև հասունացած պտուղների, տերևների կամ ցողունի մեջ, որտեղ սնվում և զարգանում են՝ առաջացնելով ականներ և անցուղիներ, վերջիններս լցնելով արտաթանքով:



Ցեցի թրթուրներն ու սննդառության ախտանշանները տերևների մոտ

Պտուղները կարող են վնասվել ձևավորումից անմիջապես հետո, և դրանցում բացված անցուղիները կարող են երկրորդային ախտահարման ենթարկվել տարբեր միկրոօրգանիզմների կողմից ու փտել:



Լոլիկի ցեցի կողմից վնասված պտուղներ

Լոլիկի ցեցով վնասվելու հետևանքով կարող է դիտվել լոլիկի բերքի մինչև 100% կորուստ: Ցեցի համար բարենպաստ պայմաններում (օրինակ՝ ջերմատներում) վնասատուն կարող է շարունակաբար զարգանալ ողջ տարվա ընթացքում: Ամռան ընթացքում ցեցը ջերմատնից կարող է տեղափոխվել բաց դաշտ:

Մոնիթորինգի (մշտադիտարկում) իրականացումը ջերմատնային պայմաններում

- Սերմերի ցանքից հետո սածիլանցում տեղադրել մեկ հատ ֆերոմոնային թակարդ և ամեն օր ստուգել ցեցի թրթուրների հայտնաբերման նպատակով:
- սերմերի ծելուց հետո ամեն օր ստուգել սածիլների վիճակը՝ ուշադրություն դարձնելով բույսերի գագաթային մասերին,
- օգտագործել զանազան կաշուն ժապավեններ,
- կիրառել էլեկտրալուսային թակարդներ:

Դաշտային պայմաններում

Լոլիկի ցեցի թրթուրների և թրթուրների հայտնաբերումը հնարավոր է բույսերի կանոնափոր ակնադիտական զննումների միջոցով: Նման զննումն օգնում է հնարավորինս վաղ բացահայտել վնասատուի զարգացման տարբեր փուլերը, ինչպես նաև վնասվածքի ախտանշանները: Սակայն թաքնված կենսակերպի պատճառով ոչ միշտ է հնարավոր նրան բացահայտել բույսերի տեսողական զննման միջոցով: